ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

ФАКУЛЬТЕТ МЕЖДУНАРОДНЫХ ОТНОШЕНИЙ

YEREVAN STATE UNIVERSITY

FACULTY OF INTERNATIONAL RELATIONS

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ

• ՀՀ, քաղաք Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1 • Республика Армения, Ереван, 0025, Алека Манукяна 1 • 1 Alex Manoogian, 0025, Yerevan, Republic of Armenia (+374 60)71-00-79, 71-00-78, int.rel@ysu.am, www.ysu.am

№ 251 «__13____»___12_____2024 թ.

Արձանագրություն N 251

ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի գիտական խորհրդի 2024թ-ի դեկտեմբերի 13-ի նիստի

Նիստին ներկա էին գիտխորհրդի 36 (երեսունվեց) անդամներից 26-ը:

1. Հեռակա ուսուցմամբ ասպիրանտների և հայցորդների ատեստավորման հարցը / զեկ.՝ գիտ. քարտուղար Գ. Բալասանյան/:
2. Թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատում / զեկ.՝ գիտ. քարտուղար Գ. Բալասանյան/:
3. Ասպիրանտի գիտական ուսումնասիրության թեմայի դասիչի փոփոխություն / զեկ.՝ գիտ. քարտուղար Գ. Բալասանյան/:
4. Ֆակուլտետի մագիստրոսական ծրագրերի ներկա և հեռակա բաժինների մագիստրատուրայի առաջին կուրսեցիների մագիստրոսական թեզերի վերնագրերի և ղեկավարների հաստատում / զեկ.՝ գիտ. քարտուղար Գ. Բալասանյան/:
5. Թեկնածուական ատենախոսության ղեկավարման թույլտվություն ստանալու նպատակով ԿԳՄՄՆ ԲՈԿ միջնորդության ներկայացման հարցը / զեկ.՝ գիտ. քարտուղար Գ. Բալասանյան/:
6. Ընթացիկ հարցեր:

Խորհուրդը որոշեց.

1. Միջազգային հարաբերությունների և դիվանագիտության և Քաղաքագիտության ամբիոնների հեռակա ուսուցմամբ ասպիրանտներին և հայցորդներին ատեստավորել: Քաղաքագիտության ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտ **Լիպարիտ Մելքոնի Ղազարյանին** չատեստավորել ամբիոնի նիստին չներկայանալու և հաշվետվություն չներկայացնելու պատճառով:
2. ա/ ԵՊՀ Քաղաքագիտության ամբիոնի հեռակա ուսուցման ասպիրանտ **Մերի Վանիկի Մուրադյանի** թեկնածուական ատենախոսության թեմա հաստատել **«Թվային տեխնոլոգիաները ԵԱՏՄ երկրների պետական տեղեկատվական քաղաքականության արդիականացման պայմաններում»**, **ԻԳ.00.01-«Քաղաքական գիտությունների տեսություն»** մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար: Գիտական ղեկավար հաստատել **ք.գ.դ. պրոֆեսոր Ա. Ա. Մարգարովին**:

   բ/ ԵՊՀ Քաղաքագիտության ամբիոնի հեռակա ուսուցման ասպիրանտ **Արմինե Այվազի Գևորգյանի** թեկնածուական ատենախոսության թեմա հաստատել **«Ներքաղաքական գործընթացներում օտարերկրյա ազդեցության հիմնախնդիրը Հայաստանի Հանրապետության հասարակական կազմակերպությունների գործունեության համատեքստում»**, **ԻԳ.00.02-«Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ»** մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար: Գիտական ղեկավար հաստատել ք.գ.դ. պրոֆեսոր **Գարիկ Միշայի Քեռյանին**:
3. ԵՊՀ Միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի հեռական ուսուցմամբ ասպիրանտ **Թամարա Մնացականի Մարտիրոսյանի ԻԳ.00.02 «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ»** դասիչը փոխել **ԻԳ.00.04 «Միջազգային հարաբերություններ» (Քաղաքական գիտություններ)** դասիչով:
4. «Միջազգային հարաբերություններ», «Համաշխարհային քաղաքականություն», «Ամերիկագիտություն», «Հանրային քաղաքականություն» և «Ազգային անվտանգություն» կրթական ծրագրերի մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման 1-ին կուրսի մագիստրոսական թեզերի վերնագրերն ու ղեկավարներին հաստատել:

5. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի դասախոսներ **Տիգրան Ռուբենի Եփրեմյանի** և **Ժակ Սամվելի Մանուկյանի** գիտական հոդվածների թիվը թույլ է տալիս նրանց ղեկավարել թեկնածուական ատենախոսություն, ֆակուլտետի Գիտական խորհուրդը միջնորդություն է ներկայացնում ԿԳՄՍ Բարձրագույն որակավորման կոմիտե թեկնածուական ատենախոսություն ղեկավարելու թույլտվություն ստանալու համար։

Գիտական խորհրդի նախագահ *Տ. Եփրեմյան*

Գիտական խորհրդի քարտուղար *Գ. Բալասանյան*